

«ՆԱԽԻՋԵՎԱՆԻԿԻ ԹԱՂԱՄԱՍ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետության բռնազավթած տարածքներից տեղահանված ընտանիքներին ապահովել տնով, կահույքով, հարկ եղած դեպքում՝ ընտանի կենդանիներով, տնկիներով՝ սահմանային վերաբնակեցում ապահովելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սատարենք մեր հերոսներին» բարեգործական հասարակական կազմակերպություն (գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան 0009, Վերին Անտառային 146/1 շենք, տարածք 70, ՀՎՀՀ՝ 02833001)
4.	Ծրագիրը կատարողը	«Սատարենք մեր հերոսներին» բարեգործական հասարակական կազմակերպություն (գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան 0009, Վերին Անտառային 146/1 շենք, տարածք 70, ՀՎՀՀ՝ 02833001)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, Ասկերանի շրջան, գյուղ Նախիջևանիկ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	438,460,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի բռնազավթած տարածքներից տեղահանված ընտանիքները: Ընտրությունը կատարելիս նախապատվությունը տրվելու է գոհված զինծառայողների կամ ծառայության մեջ գտնվող զինծառայողների, Արցախի բռնազավթած տարածքներից տեղահանված բազմազավակ երիտասարդ ընտանիքներին:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	1. 16 բնակելի տների, ընտանի կենդանիների գոմի, ենթակառուցվածքների կառուցում և հարակից տարածքների բարեկարգում՝ 385,000,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

	ֆինանսական միջոցների ծավալը	<p>2. Խաղահրապարակի խաղասարքերի, կահույքի, կենցաղային տեխնիկայի, ընտանի կենդանիների և տնկիների ձեռքբերում՝ 50,960,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:</p> <p>3. Կազմակերպական ծախսեր՝ 2,500,000 դրամի չափով, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:</p>
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>1. 16 բնակելի տների, ընտանի կենդանիների գոմի, ենթակառուցվածքների շինարարական աշխատանքների իրականացում և հարակից տարածքի բարեկարգում՝ 163,000,000 դրամի չափով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում՝ ծառայությունը ձեռք է բերվելու Արցախի Հանրապետությունում):</p> <p>2. Շինարարական նյութերի և ներքին հարդարման պարագաների ձեռքբերում՝ 222,000,000 դրամի չափով:</p> <p>3. Խաղահրապարակի խաղասարքերի, կահույքի և կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 42,000,000 դրամի չափով:</p> <p>4. Ընտանի կենդանիների և տնկիների ձեռքբերում՝ 8,960,000 դրամի չափով:</p> <p>5. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 2,500,000 դրամի չափով:</p>
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Աուդիտորական ծառայություններ՝ 2,500,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ԱՀ նախագահի աշխատակազմ, ԱՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ԱՀ քաղաքաշինության նախարարություն, Նախիջևանիկի համայնքապետարան, Ասկերանի շրջանի ղեկավարություն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

	մեխանիզմների նկարագրությունը	
--	---------------------------------	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ